ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2019 թվականի N: 523-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019

թվականի հուլիսի 19-ի թիվ 01/07.1/13986-19 գրությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 28-ի թիվ 01/04/7276-19 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի մայիսի 13-ի նիստի թիվ 9 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի մայիսի 17-ի թիվ 34 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Տիգրան Զամաքյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Լիպարիտ Մարտիրոսյանի, Աստղիկ Ալեքսանյանի, Գյումրու քաղաքապետի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Լիլիթ Մակարյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Աիդա Նիկոլյանի, Ժաննա Առաքելյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Սրբուհի Միքայելյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված Վասյա Արշակյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Լիլիթ Բաղդասարյանին, Վահան Մարտիրոսյանին, Գյումրու քաղաքապետի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Էմմա Հովհաննիսյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Աիդա Նիկոլյանին, Լուսինե Գաբրիելյանին, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Սրբուհի Միքայելյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

«Գյումրու N10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N59-Ա որոշման հավելվածում «Չամաքյան Տիգրան – Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված», «Մարտիրոսյան Լիպարիտ», «Ալեքսանյան Աստղիկ», «Մակարյան Լիլիթ», «Առաքելյան Ժաննա» բառերը համապատասխանաբար փոխարինել «Արշակյան Վասյա - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված», «Բաղդասարյան Լիլիթ», «Մարտիրոսյան Վահան», «Հովհաննիսյան Էմմա», «Գաբրիելյան Լուսինե» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի համար ճիշտ է